ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ>>

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Դասվար

Թեմա՝ Առակի դաստիարակչական նշանակությունը տարրական դասարաններում

Հետազոտող՝ Արեգա Բաբայան

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի թիվ 2 միջն. դպրոցի դասվար

Ղեկավար՝ Թամարա Աթայան

Գորիս 2023

Հետազոտության նախապատրաստումը

Ներածություն

Առակը տարրական դասարանների դասագրքերում ամենից հաճախ հանդիպող գեղարվեստական ստեղծագործություններից է, որովհետև այսօր էլ պահպանվում են ուսուցողական տեսակետից նրա կրթական ու դաստիարակչական դերն ու արժեքը:

Հիմական գաղափարը - Առակներում տարբեր իրերի և կենդանիների փոխհարաբերության վկայակոչմամբ՝ բավականին թափանցիկ կերպով խարազանվում են հասարակության տարբեր խավերի և մարդկային բնավորության զանազան վատ գծերը:

Հետազոտական աշխատանքի նպատակները

Հետազոտության արդյունքում սովորողները՝

1. Կկարողանան գործնականում տարբերակել ժանրերը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
2. Ներկայացված առակների միջոցով ճիշտ պատկերացում կկազմեն բարոյական արժեքների վերաբերյալ:
3. Կվերհիշեն առածներ՝ համապատասխան բնագրի բովանդակությանը:
4. բանալի բառերի միջոցով կգուշակեն առակները, կվերլուծեն բովանդակությունը, կմեկնաբանեն բարոյախրատական իմաստը:

Ի՞նչ է առակը

Ինչպես գիտենք առակը չափածո կամ արձակ փոքրածավալ ստեղծագործություն է, որն ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն: Առակներում նկարագրված են մարդկանվ արարքներն ու փոխհարաբերությունները, դիպուկ բնութագրումներով տրված են նրանց բնավորության գծերը, ծաղրի են ենթարկված մարդկային հասարակության բնորոշ թերություններն ու բացերը: Սակայն այդ ամենը ներկայացված է այլաբանորեն, փոխաբերական իմաստով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերության միջոցով: Առակներում յուրաքանչյուր կենդանի հանդես է գալիս իր այն վարքագծով, որով նա հայտնի է մարդուն նրա դարավոր կենսափորձից: Օրինակ՝ նապաստակը հանդես է գալիս որպես վախկոտության մարմնացում, աղվեսը՝

խորմանկության, գայլը՝ ագահության: Ուստի հեշտությամբ հասկացվում է, թե հեղինակն ինչ է ցանկանում ասել այդ առակով, ու՞մ և նկատառմամբ է ծաղրում:

Առակի պատմական անցյալից

Առակը՝ որպես գեղարվեստական ստեղծագործության տեսակ ծագել է շատ վաղ ժամանակներում: դեռևս անտիկ Հունաստանում հայտնի է եղել փռյուգիայի Եզոպոսը: Նրա առակները լայն ճանաչում են գտել թե՛ անցյալում, թե նոր ժամանակներում: Հայ բազմադարյան գրականության մեջ ևս վաղուց ի վեր հայտնի է առակի ժանրը: Դեռևս 12-13-րդ դարերից հասյտնի են առակագիրներ Մխիթար Գոշ և Վարդան Այգեկցին, որոնց առակները ոչ միայն հայերեն, այլև աշխարհի տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններն են ունեցել:

Առակների կազմությունը

Առակը բարոյախոսական, երգիծական կամ ծաղրական բովանդակությամբ պատմողական բնույթի ոչ մեծ, չափածո, իսկ երբեմն էլ արձակ գեղարվեստական ստեղծագործություն է: Այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից (պատմողական մաս) և բարոյախոսությունից (բարոյախրատական մաս): Առակը կարելի է բաժանել նաև 3 մասի՝ պատմողական, տրամաբանական և բարոյական կամ եզրափակման: Առակի բարոյախրատական մասն ամփոփիչ եզրակացություն է, որը զետեղվում է առակի սկզբում կամ ավելի հաճախ՝ վերջում:

Առակի ժանրային առանձնահատկությունները

Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է ինչպես պատմվածքին, այնպես էլ հեքիաթին: Եթե պատմվածքի նման առակը ևս ունի սյուժե, ապա հեքիաթի պես դրա մեջ առկա են կենդանիների, առարկաների ու երևույթների անձնավորումը, վառ է երևակայության ուժը և գույների

խտացումը: Եվ դա իհարկե, պատահական չէ: Ինչպես հայտնի է, առակները ծագել են հեքիաթներից և անհամեմատ ավելի ուշ են հանդես եկել:

Առակների ուսուցողական նշանակությունը

Ուսուցողական տեսակետից առակների կրթական և դաստիարակչական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում:

Յուրաքանչյուր առակ ներառում է որոշ այլաբանություն կամ փոխաբերություն: Դրա բացահայտմամբ պայմանավորվում է բուն ասելիքի պարզաբանումը, հիմնական գաղափարի ըմբռնումն է ու ճիշտ մեկնաբանությունը: Ամեն մի առակ պարունակում է որոշակի բարոյական եզրակացություն կամ խրատ, արը ավարտն է, դաստիարակչական էության խտացումը: Ուստի դրա բացահայտումից են կախված առակի դաստիարակչական ու գեղագիտական ազդեցության խտությունն ու կայունությունը: իհարկե, առակները երեխաների համար սիրելի են ոչ այնքան իրենց գործող անձերի փոփհարաբերություններով ու բարոյական եզրակացություններով, որքան գեղարվեստական արժեքով՝ կերպարների գունեղությամբ, գործող անձերի բազմազանությամբ ու գործողությունների աշխուժությամբ, որոնք բնորոշ են առակին:

Առակների դաստիարակչական նշանակությունը

«Կռիլովի առակները,- ոչ թե սովորական այլաբանություններ են, այլ բանաստեղծական պատկերներ, փոքրիկ պատմվածքներ, դրամաներ, բանաստեղծական ընդգծված կերպարներով»,- գրել է Բելինսկին:

Առակների այս բնորոշումից պարզ երևում է, թե որը կարող է լինել դասավանդման ճիշտ ուղին, որպեսզի չխամրի դրանց գեղարվեստական արժեքը, չխաթարվի գեղագիտական ու դաստիարակչական ազդեցությունը:

Առակների ուսուցման առանձնահատկություններն ու խնդիրները

1. Առակի բովանդակության վերլուծություն
2. Հերոսների բնավորության գծերի բացահայտում՝ նրանց արաքների հիման վրա

3. Առակի հերոսների համեմատում. նրանց արաքների բնավորության գծերի նմանության և տարբերության որոնում

4. Հերոսների կամ իրավիճակի նկարագրություն՝ ըստ սեփական պատկերացման

5. Արարքների գնահատում և սեփական վերաբերմունքի արտահայտում նրանց նկատմամբ

6. հերոսների նկատմամբ հեղինակային վերաբերմունքի որոշում

7. Առակի այլաբանական իմաստի բացահայտում (հանդիպու՞մ են, նույնպիսի բնավորությամբ մարդիկ)

8. Առակի հիմնական իմաստի որոշում

9. Առակի լեզվի ուսումնասիրում (երկխոսություններ, թևավոր խոսքեր)

10. Առակի ժանրային առանձնահատկությունների ուսումնասիրում (հերոսները, բարոյախրատական մտքերը, ծածաղաշարժ մտքերը, հեղինակի հեգնանքը)

11. Առակի կառուցվածքային տարրերի ուսումնասիրում (հիմնական բովանդակություն, բարոյախոսությունն):

Ըստ այդ մեթոդական մոդելի՝ **առակի ուսուցման արդյունքում** աշակերտները պետք է իմանան և կարողանան.

- Ինչո՞վ է առակը տարբերվում մյուս ժանրերից
- Գործողությունների զարգացումը, բարոյախոսությունը, վերջաբանը
- Հասկանալ բարոյախոսության իմաստը և այլաբանության դերը
- Առանձնացնել առակի կառուցվածքային տարրերը
- Նկատել հեղինակի ծաղրը՝ կամ առակի տվյալ իրադրության մեջ, կամ ընդհանրապես օգտագործված բառապաշարում
- Համեմատել առակի հերոսներին, գտնել նմանություններ և տարբերություններ նրանց արարքներում, արտաքին տեսքում, բնավորության և լեզվի մեջ
- Պատկերացնել իրենց՝ որպես առակի գործող անձիք և այն իրավիճակում, ուր տվյալ առակի հերոսները հայտնվել են
- Գնահատել նրանց արարքները, արտահայտել վերաբերմունքը նրանց նկատմամբ

- Կիրառել արտահայտիչ ընթերցանության տեխնիկա (դերերով ընթերցանություն)
- Օգտագործել տարբեր առակների համեմատման և հակադրման հնարներ

Առակների հերոսները՝ կենդանիները և բույսերը խոսում, գործում և դատողություններ են անում մարդկային լեզվով: Հենց այս այլաբանության կամ փոխհարաբերության բացահայտումն էլ առակի դասվանդման առանձնահատկությունն է: Առակների հերոսներն ունեն բնավորության խտացված գծեր, նրանց արարքները մատչելի են երեխաներին, որովհետև վերցված են կյանքից: Առակներում գովաբանվում , խրախուսվում են լավն ու բարին, գեղեցիկն ու մարդկայինը՝ ջանասիրություն, ազնվություն, քաջություն, հայրենասիրությունն, ընդհակառակը, ծաղրի են ենթարկվում ու դատապարտվում վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, ծուլությունը, վախկոտությունը, դավաճանությունը: «Մայրենի-4» դասագրքի (հեղինակներ՝ Կ.Թորոսյան, Վ. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Հ. Խաչատրյան) «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր» թեմատիկ առարկաների խումբն իր մեջ ներառում է այս բոլոր առանձնահատկություններից մի մաբողջ շարք:

Հետազոտության վարկածի առաջքաշում

Աշակերտները բեմադրում են «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր» պատմությունը:

Երկու ընկերներ զրուցում էին.

-Հիշու՞մ ես մեր դասրանցի Արային.

-Այո՛, հիշում եմ:

-Երկու օր առաջ տեՀսա՝ ցամաք ձորի աղվես էր դարձել:

-Չի կարող պատահել: Մարդը աղվես չի դառնում: Համ էլ ինչ իմացար, որ ցամաք ձորի աղվես է:

-Ինձ ճիշտ չհասկացար: Ուզում եմ ասել՝ ոտքի վրա հալվել էր, վիզը տանձի պոչ էր դարձել:

-Ձնեմարդ է, ի՞նչ է, որ հալվի: Վիզը որ տանձի պոչ դառնա, գլուխը վրան չի մնա:

-Է՛, լավ չես հասկանում: Ոտքի վրք չորքցել էր, մենակ քիթն էր մնացել:

-Ինչքան էլ չորանա՛, մարդուց միայն քիթը չի կարող մնալ:

-Ինձ լավ չես հասկանում: Ասում եմ՝ շատ խիստ նիհարել էր. քթից բռնեիր՝ շունչը կտար:

-Քեզ պե՞տք էր նրա շունչը, որ ուզում ես քթից բռնել:

-Հարց - Ինչու՞ իրար չէին հասկանումընկերները:

-Պատասխան- Նրանցից մեկը խոսում էր փոխաբերական իմաստով, իսկ մյուսը հասկանում էր ուղիղ իմաստով:

Վարկածի միտքն ավելի պարզ դարձնելու նպատակով օգտագործում ենք հետևյալ մեթոդական հնարը. Խմբավորում՝ ըստ գույների (Աշակերտներն ըստ ցանկության վերցնում են որևէ գույնի ուղղանկյունաձև թերթիկ):

Ստեղծվում է 4 խումբ

I խումբ – կանաչ

II խումբ - դեղին

III- խումբ - կարմիր

IV – խումբ- վարդագույն

(Գունացոր թղթերի տակ քանդված առածներ են. խմբերը վերականգնում են դրանք):

I խումբ

Օձն իր	շապիկը	կփոխի	բնույթը	չի փոխի:

II խումբ

Ազնիվ մարդու	հացը	չի կտրվի	անազնիվ վաստակը	հեղեղը կտանի:

III խումբ

Ամռանը	պառկես հովերը	ձմռանը	սատկեն	կովերը:

I V խումբ

Դատարկ	տակառի	ձայնը	բարձր	կլինի:

I հանձնարարությունը խմբերին.

- Վերականգնել քանդված առածները:

- Բարձրաձայն ընթերցել առածը:
- Ասել՝ որ առակի հիմնական մտքին է համապատասխանում այն:

I I հանձնարարությունը .

Ներկայացնել առակները (չափածո կամ արձակ).

- Ո՞րն է առակի հիմնական միտքը, ի՞նչ սովսրեցինք:
- Առակի միտքն արտահայտել համապատասխան առածներով:
- Լրացնել աղյուսակը (դատապարտելի և գովելի բառերով):

I խումբ

Ներկայացնում (բեմադրում) են Ավետիք Իսահակյանի «Արջն ու օձը» առակը և պատասխանում առաջադրված հարցերին.

Ի վերջո որոշում են առակի հիմնական միտքը.

-Դիմացինի նկատմամբ պետք է լինել հանդուրժող, ընդունել նրան այնպիսին ինչպիսին նա կա:

Այնուհետև առակի հիմնական միտքն արտահայտում են առածով.

Ընկեր ընտրիր առանց շտապելու. առավել ևս՝ մի շտապիր փոխել նրան:

Խումբն ասում է առածներ ընկերության վերաբերյալ:

- Ասա՝ ով է ընկեորդ, ասեմ՝ ով ես դու:
- Ընկերոջ հինն է լավ, հագուստի նորը:
- Ամեն բարև տվող ընկեր չէ:
- Ամեն թռչուն իր երամի հետ է թռչում:
- Բարեկամը փորձանքի մեջ է ճանաչվում:
- Ընկերությունը բյուրեղապակի է, եթե փշրես, չես կարող կպցնել:

Խումբը լրացնում է մեծադիր աղյուսակը գովելի և դատապարտելի բառերով:

Դատապարտելի բառը՝ անհանդուրժողականություն:

Գովելի բառը՝ շիտակություն:

Այս բառերը ընտրում և տեղադրում են մեծադիր աղյուսակում, համապատասխան առակի նկարի տակ: Այդ մեծադիր աղյուսակը երեխաներն իրենք

են պատրաստել և թեմատիկ խմբի ամեն մի առակի ուսուցման ընթացքում նկարել յուրաքանչյուր առակին համապատասխան նկար:

I I խումբ

Ներկայացնում են վարդան Այգեկցու «Այրի կիչնը և որդին» առակը և վերոհիշյալ քայլաշարով կատաում տրված հանձնարարությունը:

Առածներ

- Աջով տուր, որ ձախով առնես:
- Ինչ-որ ցանես, այն էլ կհնձես:
- Ազնիվ մարդու հացը չի կտրվի:
- Անազնիվ վաստակը հեղեղը կտանի:
- Եթե փորձես խաբել ուրիշին, կխաբես լոկ քեզ, հիշի՛ր մշտապես:

Դատապարտելի բառը՝ խարդախություն

Գովելի բառը՝ արդարություն

I I I խումբ

Ներկայացնում են Խնկո-Ապոր «Ճպուռն ու մրջյունը» առակը:

(Խումբը նշված քայլաշարով կատարում է իր հանձնարարությունը):

Առածներ

- Ամռանը պառկես հովերը, ձմռանը սատկեն կովերը.
- Ամռան փուշը՝ ձմռան նուշ է:
- Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:
- լավություն արա, ջու՛րը գցիր:
- Ինչ որ ցանես, այն էլ կհնձես:
- Ժամանակը ոսկի է:
- Ձյունն ի՞նչ գիտի, թե աղքատը փայտ չունի:

Դատապարտելի բառը՝ թեթևամտություն

Գովելի բառը՝ աշխատասիրություն:

I V խումբ

Արտասանում են Հրաչիկ Սևոյանի «Տակառի լողը» առակը:

(Խումբը վերոհիշյալ քայլաշարով կատարում է իր հանձնարարությունը):

- Կյանքը գործ է, ոչ թե ճառ:
- Տակառը խորհրդանշում է մեծամիտ, դատարկ, թույլ, պարծենկոտ մարդկանց, իսկ նավը՝ համեստ մարդկանց:

Առածներ

- Պարծենկոտի մեջը փուտ է, ինչ որ կասի, կեսը սուտ է:
- Դատարկ տակառի ձայնը բարձր կհնչի:

Մնջախաղ- Մնջախաղով ցույց տալ կենդանիների շարժումները: Յուրաքանչյուր խումբ ընտրում է մի կենդանի:

Հանձնարարությունը խմբերին

Բանալի բառերով գուշակել առակի վերնագիրը:

I խումբ

Տրված բանալի բառերով (անցունակ զինվոր, փղեր՝ խենթ ու համարձակ, սեր և միություն, երբեք պարտություն) գուշակում ու արտասանում են Ռաֆայել Հայրապետյանի «Շախմատ» առակը:

Ուսուցիչը հարցնում է խմբին.

-Ո՞րն է առակի հիմնական միտքը, ի՞նչ սովորեցիք:

Որտեղ կա սեր ու միություն,

Այնտեղ չի լինի երբեք պարտություն:

Միասնականությունը միշտ հաղթնակում է. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է:» (Ե. Չարենց)

Առակի հիմնական մտքին համապատասխան խումբն ասում է առածներ.

- Ծափ տալու համար երկու ձեռք է պետք:
- Գյուղ կանգնի , գերան կկոտրի:
- Մի ծաղկով գարուն չի գա:
- Մի ձեռքը ծափ չի տա: Ուս ուսի տանք սարեր շուռ կտանք:

Մեծադիր աղյուսակը լրացնում են առակի համապատասխան բառերով.

Դատապարտելի բառը՝ անմիաբանություն

Գովելի բառը՝ միասնություն:

II խումբ

Տրված բանալի բառերով (գայլ, աղվես, ագռավ, որսորդներ, վիճել, մազերը հաշվել, մազապուրծ փախչել) գուշակում ու ներկայացնում են Սերգեյ Վարդանյանի «Վեճը» առակը.

- Սնապարծությունն ու հիմարությունը նույն տանն են բնակվում: Մի՛ թակիր այդ տան դուռը:

Առածներ

- Հիմար գլխի պատճառով տուժում են ոտքերը:
- Ջուն եկել, ջրաղացն է տարել, չախչախն ես փնտրում:
- Ի՛նչ ես կորցրել, ի՛նչ ես ման գալիս:
- Կռվի մեջ փլավ չեն բաժանում:
- Ուղտի պարը կամրջին է բռնում:

Դատապարտելի բառը՝ սնապարծություն

Գովելի բառը՝ վճռականություն

Այնուհետև խումբը մեկնաբանում է առակում տեղ գտած՝ «Թե դու աղվեսն ես, ես քո պոչն եմ » դարձվածքը:

III խումբ

Տրված բանալի բառերով (քնած առյուծ, մուկ, քահ-քահ ծիծաղել, կրծել պարանը, երախտահատույց լինել) գուշակում ու ներկայացնում են «Առյուծն ու մուկը» առակը:

Առակը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենից ուժեղներին ճակատագիրը երբեմն ստիպում է ամենից թույլերի կարիքն զգալ:

Այսպիսով՝ Բնության մեջ հարազատ
Ապրում են պարզ ու ազատ
Մեծ ու փոքր միասին
Ամեն մեկը՝ իր հոգսին:

Առածներ

- Պստիկ է, բայց ճստիկ է:
- Մկան մեզը ջաղացին օգուտ է:

Դատապարտելի բառը՝ թերհավատություն

Գովելի բառը՝ երախտագիտություն

IV խումբ

Բանալի բառերով (քնած նապաստակ, խժռել, փախչող եղջերու, չքացել, որսը բաց թողնել, դատարկ հույս) գուշակում ու ներկայացնում են «Առյուծն ու նապաստակը» առակը:

Այդպես էլ որոշ մարդիկ, ընկնելով շատի հետևից, չեն նկատում, որ կորցնում են ունեցածը:

Առածներ

- Շատի հետևից ընկնողը , քիչն էլ կկորցնի:
- Մի գնդակով երկու նապաստակ չես խփի:
- Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի:

Դատապարտելի բառը՝ ագահություն

Գովելի բառը՝ սակավապետություն:

«Բառը ափի մեջ». բառիմաստի բացատրություն

Iխումբ ՝ շախմատ

IIխումբ ՝ թացան

III խումբ ՝ չքանալ

IVխումբ ՝ մազապուրծ

«Բառեր՝ աչքի առաջ» ուղղագրական աշխատանք

Iխումբ ՝ սր/բ/ել, հեղ/ե/ղ

IIխումբ ՝ /ե/ղջերու, փա/խ/չել

III խումբ ՝ համար/ձ/ակ, եր/բ/եք

IV խումբ ՝ հա/ղ/թական, ճամ/փ/ա

Ուսուցիչը հարցնում է.

-Ժողովրդական բանահյուսության ի՞նչ նմուշների հանդիպեցինք:

Աշակերտները պատասխանում են հանդիպեցինք

Առակի, որը փոքրածավալ չափածո ստեղծագործություն է: Առակի հերոսները լինում են կենդանիները, բույսերը, բնության երևույթները: Դրանք բոլորը հանդես են գալիս մարդկանց փոխարեն: Առակում գովաբանվում են բարությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, ծաղրվում են չարությունը, պարծենկոտությունը, ծուլությունը:

Առածի, որը սեղմ ու պատկերավոր ասույթ է կյանքի մարդկային փոխհարաբերությունների, կենցաղային ամենաբազմազան երևույթների վերաբերյալ:

Առածին բնորոշ են քիչ բառերով մեծ բովանդակություն հաղորդելու հատկությունը, պարզությունը, պատկերավորությունը: Առածը վերցված է առակներից, հեքիաթներից և ուրիշ զրույցներից. դրանց իմաստի խտացումն է՝ կարճ ու ամփոփ ներկայացումը: Առածը, ինչպես հնոց խոսք կամ մեծերի ասած՝ միշտ ժողովրդի բերանումն է և ունի օրենքի ուժ: Այն նշանակություն ունի առանձնապես արևելքում: Առածն ունի բարոյախոսական, խրատական բովանդակություն, և այն օգտագործում են ըստ իրավիճակի, երբեմն մարդկային գործունեության դրվագները հաստատելու կամ ժխտելու նպատակով: Առածները աչքի են ընկնում արվեստի բարձր արժանիքներով, ստեղծվել են ժողովրդի ծոցից, ակունքից և հարազատ են ժողովրդի հոգուն, պատկերում են ժողովրդի կյանքը, կենցաղը:

Դարձվածքի, որն իրենից ներկայացնում է երկու կամ ավելի բառերի կայուն կապակցություն: Ամբողջությամբ վերցրած արտահայտում է մեկ գաղափար: Դարձվածքն իր մեջ կրում է փոխաբերական իմաստ:

(Այնուհետև աշակերտներն ըստ խմբերի հերթով մոտենում են պաստառին, գրպանից հանում բառեր և համապատասխան բառ նկարի (գլուխ, քիթ, ձեռք, աչք) տակ դնում և կազմում դարձվածք:

Iխումբ – գլխին զոռ տալ

IIխումբ - քիթը երկարել, քիթն ամեն տեղ խոթել

III խումբ – ձեռքերի ազատություն տալ

IV խումբ - աչքով տալ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամենից առաջ անհրաժեշտ է առակներն անվնել որպես սովորական գեղարվեստական ստեղծագործություններ և ձգտել այն բանիբն, որ աշակերտները միանգամայն լուրջ ընդունեն կերպարների անձնավորումը, նրանց կատարած մարդկային գործողությունները, խոսակցություններն ու դատողությունները:

Առակների ուսուցման ժամանակ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել գործող անձերի՝ որպես գեղարվեստական կերպարների ճիշտ ընկալման վրա: Դրանով է պայմանավորված նաև այլաբանությունների ճիշտ ընկալումը:

Երեխայի երևակայությունը բավականին ուժեղ է, երկրորդ՝ առակների մեջ տրված է կյանքի ճշմարիտ նկարագիրը, կերպարների կենդանի պատկերումը, բարու հաղթանակն ու չարի պարտությունը: Այդ ամենն այնքան պատկերավոր է, որ հաճախ երեխաները մոռանում են, որ գործող անձերը կենդանիներ են:

Առակների դասավանդման այս ձևն աշակերտներին հնարավորություն կտա թափանցելու գեղարվեստական ստեղծագործության ներքին բովանդակության մեջ, հասկանալու ոչ միայն գրվածը, այլև այն , ինչ հեղինակը ցանկացել է ասել ենթատեքստով:

Աշխատանքի վերջում աշակերտները երգում են առակի վերաբերյալ երգ.

Ողջ կյանքում մեզ խրատում են,
Առակները, առակները, առակները,
Ուր խոսում են, զրուցում են
Բույսերը, կենդանիները:
Առակները զրուցում են դարեդար,
Առակները խրատում են անդադար,
Ցույց են տալիս մեզ լավն ու վատը,
Հիշենք նրանց քաջ խրատները:

Կիրառելով գնահատման բազմազան ռազմավարություններ, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում՝ երեխաները կսովորեն ավելի լավ և ձեռք կբերեն ինքնուրույն ուսումնառության համար անհրաժեշտ հմտություններ:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախաշավիղ 8. 2012թ.
2. «Առակի ուսուցումը տարրական դասարաններում» Ս. Գրիգորյան
3. «Մայրենի 4 դասագիրք» 2016թ. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան և ուրիշներ
4. Թեմատիկ խումբ. «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր»: